

Թողիկոս չարունակեց բանակցութիւնները թղթերով եւ պատգամաւորներով մէկ կողմէն Լեհահայոց եւ միւս կողմէն Հռոմի հետ : Հազիւ 1653ին յաջողեցաւ Փիլիպպոսի խաղաղ հունի վրայ հանել վէճերը եւ ժողովուրդին եւ Եպիսկոպոսին մէջ հաշտութիւն մը գոյացնել : Յովհաննէս Վ. Արդնցի իւր խոհեմ եւ իմաստուն ընթացքով մեծապէս նպաստամտոյց եղաւ այս խաղաղութեան գործին :

Զմեզ այս տեղ չեն հետաքրքրեր Նիկիոյ աբեպիսկոպոսի պատմութեան անդրադոյն չըջանի դէպքերը, որոնք տեղի ունեցան 1634էն ետքը :

Յետահայեաց ակնարկ մը կը բերէ զմեզ այն համոզման, թէ իրերը պիտի չառնէին այն ընթացքը եւ պիտի չյանգէին այն հետեւութեան, ուր թողուցինք, եթէ Գրիգոր Կեսարացի եւ Խաչատուր վարդապետ գիտնային կանուխէն ճանչնալ Չճամեայ եպիսկոպոսին նկարագրի թերութիւնները, եւ իբրեւ դատիարակ ջանք տանէին մատաղատունկ ծառին ծռութիւնն ուղղել քան արմատէն ի բաց խլել, երբ մանաւանդ օտար հողի մէջ ձգուած էին անոր խիղբերը, ուրիշ հիւթով սնած, ուրիշ կլիմայի տակ աճած, ուրիշ չըջանակէ չըջապատուած : Պիտի ըսեմ, որ երկպառակութեան սերմը յանձնեց հողի Մեւքիսեղեկ կաթողիկոս, Գրիգոր Կեսարացի ջուր տուաւ անոր եւ աճեցուց Խաչատուր վարդապետ :

Արտաքին՝ ոչ քաղաքական եւ ոչ եկեղեցական կողմէ միջամտութիւն տեղի չունե-